ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆԸ

1. Երկնահյուս համաստեղության կամարն ամբողջացնողը: *2003 թ.* սեպտեմբերի 18-ին լրանում է աշխարհահռչակ գիտնական, հայ ժողովրդի փառապանծ զավակ, ԽՍՀՄ սոցիալիստական աշխատանքի կրկնակի և ՀՀ ազգային հերոս, Վիկտոր Համազասպի Համբարձումյանի ծննդյան 95-ամյակը:

Վ. Համբարձումյանն իր վառ անհատականությամբ ամբողջացնում էր դարերի խորքից ծնունդ առած հայ գիտության և մշակույթի եզակի դեմքերի այն համաստեղությունը, որի առանցքը Մաշտոց–Խորենացի - Շիրակացի - Նարեկացի - Համբարձումյան հզոր կամարն է: Հազարամյակների պատմության մեջ այդ մշակույթն արարողների հայտնությունը եզակի երևույթ է: Նրանք իրենց հոգևոր հարուստ աշխարհով և տաղանդի հզոր շնչով ամբողջացրել են ազգի դիմանկարը: Վ. Համբարձումյանի անունն ու գործը աշխարհով մեկ սփռված մեր հայրենակիցներին բերեցին նոր փառք, ապահովեցին նրա արժանի տեղն ու դերը արդի համաշխարհային գիտության պառնասում: Իզուր չէ, որ հայ ժողովուրդը, ի դեմս Վ. Համբարձումյանի, փորձում է տեսնել ինքն իրեն, նրա երախտիքով ծանր ու թեթև անել իր գիտական միտքը՝ համաշխարհային հնքին համեմատ:

Համբարձումյան գիտնականի անունը շաղկապված է համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացին, մասնավորապես աստղագիտության հետագա զարգացման ընթացքին: Նա աշխարհի շուրջ երեք տասնյակ երկրների գիտության կաճառների իսկական, պատվավոր կամ արտասահմանյան անդամ էր, տասնյակ համալսարանների դոկտոր, գիտական ընկերությունների անդամ: Հիշենք, որ Վ. Համբարձումյանը երկու անգամ գլխավորեց Միջազգային աստղագիտական ընկերությունը՝ միանձնյա ընտրվելով նրա պրեզիդենտ: Այդ հայորդին էր, որ տակավին երիտասարդ տարիքում Անգլիայի Թագավորական աստղագիտական ընկերությունում արժանացավ Նյուտոնի թիկնոցը կրելու պատվին, հետագայում նման թիկնոցներ կրելու պատվին արժանացավ այլ երկրներում, դարակազմիկ գիտական սխրանքների համար դարձավ բազմաթիվ երկրների գիտական

օջախների ու համալսարանների մեկ տասյակ ոսկե մեդալների ասպետ, ԽՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր, սոցիալիստական աշխատանքի կրկնակի և ՀՀ ազգային հերոս: Իրոք, մարդու, հողածնի մեկ կյանքի համար զարմանալի առատ, միլիարդների մեջ քչերին հասանելի այդքան արժեքավոր վաստակ:

Վ. Համբարձումյանը ամենից առաջ հայ ժողովրդինն է, մի ժողովուրդ, որն ապրում և արարում է այս լեռնաշխարհում, որն ավելի մոտիկ է Ծիր Կաթնի անմար աստղերին:

Մենք՝ Վ. Համբարձումյանին հաջորդող սերունդներս, հպարտ ենք, որ բախտ է վիճակվել աշխատել նրա հետ, լինել նրա ժամանակակիցը: Որպես ՀՀ ԳԱԱ անփոփոխ նախագահ՝ նա շուրջ կես դար կազմակերպել, ուղղություն և ընթացք է հաղորդել Հայաստանի գիտական մտքի զարգացմանը, կողմնորոշել այն համաշխարհային մակարդակը միտող շավիղներով, գործադրել հնարավոր և անհնարին բոլոր ջանքերը՝ գիտության մարդկանց ստեղծագործական առաջընթաց ապահովելու ճանապարհին:

2. Հանդիպումներ արտասովոր, կեցվածքով վեհ ու վսեմ, բայց սովորական քաղաքակիրթ մարդու հետ: ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերում շատ հաճախ էին քննարկվում տնտեսագիտական հիմնահարցեր: Դրանք տարիներով ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի առաջատար աշխատողները մշակում, հղկում և հասցնում էին ավարտի: Քննարկվելիք աշխատանքը Վ. Համբարձումյանը թերթում, աչքի էր անցկացնում, երբեմն էլ հանգամանորեն ծանոթանում էր: Քննարկման ընթացքում նա այնպիսի ճիշտ դիտողություններ էր անում, որ մեր մտքով անգամ չէր անցնում: Համոզում էր մեզ, և աշխատանքը հետ էինք վերցնում վերամշակման: Զարմացած էինք, թե այդ ինչպես է պատահել, որ մեզանից ոչ ոք չի կռահել և երբեմն թույլ է տվել թյուրիմացություններ: Այդ դեպքերն այնքան շատ էին. որը հիշես, որը թողնես: Բայց մի դեպք չեմ մոռանում. մի անգամ ակադեմիայի տարեկան ժողովում առաջատար տնտեսագետներից մեկը ինքն իրենով տարված՝ մեկնաբանում էր տնտեսական օրենքների բնույթը: Թույլ տվեց մի կոպիտ սխալ: Ելույթից հետո Համբարձումյանը տվեց երևույթի ճիշտ մեկնաբանությունը: Ելույթ ունեցողը սխալն ընդունեց՝ ներողություն խնդրելով: Նման դեպքերը հազվադեպ չէին:

Եթե որևէ խոշոր գիտնական ժամանակի ընթացքում ընտրվելու էր ակադեմիայի անդամ, Համբարձումյանն ինքը, անձամբ, ուշի ուշով հետևում էր նրա գիտական առաջընթացին: Ինքն էր նկատում, բազմաթիվ առիթներով փորձում, լսում գիտական զեկուցումները, ուսումնասիրում ձեռք բերած նվաճումները: Երբ համոզվում էր, որ նա կարող է գիտության անվանի գործիչ դառնալ, խորհրդակցում էր համապատասխան մասնագետների հետ՝ նրան ընձեռելով ընտրվելու հայց ներկայացնելու հնարավորություն: Ընտրությունների ընթացքում ոչ մի ճնշում, երբ վերջնականապես համոզվում էր, որ նրան ընտրվելու համար պայման էր ստեղծված՝ համապատասխան տեղ տրամադրելով: Այդքանը միայն: Խնդիրը մնում էր օրինական ճանապարհով, քվեարկությամբ ակադեմիայի անդամի տեղը զբաղեցնելուն: Իսկ երբ պատահում էր, որ այդ տեղը չէին զբաղեցնում, առանձնապես հոգ չէր, պետք է փորձել հաջորդ անգամ:

Յուրաքանչյուր բաժանմունքում առաջադրվում էին ակադեմիական տեղեր՝համապատասխան մասնագիտությունների գծով: Ըստ մասնագիտությունների

տեղերի, ընդհանուր ցանկը հաստատվում էր ՀՀ ԳԱԱ նախագահությունում՝ հավանական մասնագետների նկատի առնելով: Այդ ցանկը ներկայացվում էր Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտե: Կենտկոմի բյուրոյի հավանությանն արժանանալուց հետո, նույն կարգով, ներկայացվում էր Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի նախագահություն: Վերջինս իր հերթին հանձնարարում էր համապատասխան բաժանմունքներին՝ հարցը նախագահություն ներկայացնելու համար: Մի անգամ Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի բաժանմունքներից մեկում առարկել էին Հայաստանի գիտությունների ակադեմիային՝քվեարկության համար մեկ ակադեմիկոսի տեղ հատկացնելու կապակցությամբ՝ պատճառաբանելով, որ մեկ ակադեմիկոսի պատվավճարով կարելի է ընտրել ակադեմիայի երկու թղթակից անդամ: Բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարը խնդիրն այդպես էլ ներկայացրել էր նախագահության նիստում: Համբարձումյանը՝ որպես միութենական ակադեմիայի նախագահության անդամ և ՀՀ ԳԱԱ-ի նախագահ, նիստում առարկել է բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարին՝ հարցնելով, թե երկու թղթակից անդամ ասելով նա ո՞ւմ նկատի ունի. չէ՞ որ այդ տեղերի համար կոնկրետ գիտնականներ են նկատի առնվում: Բաժանմունքի քարտուղարը ոչ ոքի չի ներկայացրել՝ ասելով, որ իրեն Հայաստանի ակադեմիայից են հուշել: Համբարձումյանը վճռականապես պատասխանել է, որ ինքը ակադեմիկոս ընտրելու տեղի հայցով նկատի է առել կոնկրետ թեկնածուի՝ տվյալ դեպքում, ակադեմիայի թղթակից անդամի: Չէ՞ որ Հայաստանի ակադեմիայի իրավիճակը ինքն ավելի լավ է պատկերացնում: Ինչ վերաբերում է երկու թղթակից անդամների ստանալիք պատվավճարներին, ապա դա երկու անգամ ավելի կլինի ակադեմիկոսի պատվավճարից, քանի որ այս տեղը կարող է զբաղեցնել թղթակից անդամը, որն արդեն պատվավճար է ստանում: Լռելյայն ընդունվում է Համբարձումյանի առաջարկը:

Համանման առիթով կարելի է վերհիշել մեկ այլ դեպք: ՀՀՇ-ական իշխանավորները և, առաջին հերթին, նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, գտնում էին, որ ակադեմիայում հարկավոր է վերացնել «թղթակցի» ինստիտուտը: Ըստ նրանց, լավ կլինի, եթե բոլոր թղթակից անդամներին դարձնեն ակադեմիկոս: Ակադեմիայում երկար մտորելուց հետո որոշում կայացվեց ընդառաջել, բայց՝ ընտրությամբ: Հայաստանում, 55 թղթակից անդամների թվին համապատասխան, այդքան էլ ակադեմիկոսներ ընտրվելու տեղեր հայտարարվեցին: Սակայն ակադեմիկոս ընտրվեցին միայն 14 թղթակից անդամ: ՀՀՇ-ն պնդում էր, որ լավ կլինի մնացածներին հրամանով ձևակերպել: Մի քանի անգամ ակադեմիկոսների հավաք հրավիրեցին, և, ի վերջո, հարկադրաբար որոշում ընդունվեց: Համբարձումյանը և մի քանի ակադեմիկոսներ կտրականապես դեմ արտահայտվեցին այդ որոշմանը և նույնիսկ հանդես եկան մամուլում: Նրանք գտնում էին, որ ամեն ինչ պետք է տեղի ունենար ընտրությամբ, օրինական ճանապարհով: Բայց ՀՀՇ-ն մտահոգ էր մի քանիսի համար, որոնք կարող էին չընտրվել: Եվ այդպես «հրամանագրով» մնացած թղթակից անդամները վերանվանվեցին ակադեմիայի իսկական անդամներ: Մեկ անգամ նույնիսկ տեղի ունեցավ միայն

ակադեմիկոսների ընտրություն: Տարիներ անց, երբ ՀՀՇ-ն զիջել էր իշխանությունը, ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը հարց բարձրացրեց «թղթակցի» ինստիտուտը վերականգնելու մասին: Ժողովը այդպես էլ որոշեց: Կառավարությունն ընդառաջեց:

Համբարձումյանը հետաքրքրվում էր գիտության մարդկանց շահերով, անկախ նրանից՝ հայ էր, թե օտար ազգի: Չեմ մոռանում մի դեպք: Դա 1978 թ. աշնանն էր: Տոնում էին Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ ընդգրկելու 150-ամյակը: Ամբողջ երկրի, գիտական ընտրանին հավաքվել էր Երևանում: Բացման խոսքով հանդես եկավ Վ. Համբարձումյանը, որի՝ երկու ժամ տևողությամբ զեկուցումը «Հակադարձ խնդիրների մասին» գերել էր բոլորին: Իսկ ԽՍՀՄ ԳԱ պրեզիդենտ Ալեքսանդրովի՝ այդ հրաշք մարդու աներևակայելի զեկուցումը համեմվում էր կատակներով, անկաշկանդ հումորով: Արարողությունը տևեց 3 օր: Հայաստանի ականավոր գիտնականներից յուրաքանչյուրին կցել էին որևէ հանրապետության ակադեմիայի ներկայացուցչի՝ նրանց ուղեկցելու համար: Ուկրաինայի ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Պատոնին ուղեկցում էր ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանը: Եվ քանի որ նրանք այցելելու էին Բյուրականի աստղադիտա-բան, նրանց միացան Ուկրաինայի ակադեմիայի փոխպրեզիդենտները և իրենց ամբողջ պատվիրակությունը: Ինձ ևս բախտ էր վիճակվել ուղեկցելու նրանց:

Բյուրականի աստղադիտարանը մանրազնին ուսումնասիրելուց հետո բոլորն էլ հավաքվեցին Համբարձումյանի աշխատասենյակում: Համբարձումյանի և Պատոնի միջև, ակադեմիկոս Ս.Մերգելյանի ներկայությամբ, խոսք բացվեց գիտության տարբեր երևելիների մասին: Այդ պահին Համբարձումյանը մտաբերեց Ուկրաինայի աստղադիտարանի տնօրենին, ասելով.

-Հերիք չէ՞ նա մնա ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, ժամանակը չէ՞, որ ընտրվի ակադեմիկոս:

Պատոնը խիստ զգացվեց նման ուշադրության համար, և երկուսով իրար ձեռք սեղմեցին: Իմ կարծիքով, հարցը լուծված էր:

Մի հանգամանք ևս: Վ.Համբարձումյանը ակադեմիայի անդամ ընտրվողին, գիտական խնդիրներից բացի, առաջադրում էր մեկ այլ՝ շատ կարևոր խնդիր. եթե տվյալ անձը չի տիրապետում հայերենին, անպայման պետք է սովորի: Քանի-քանի ռուսախոսներ այդ կերպ դարձան հայախոսներ: Մինչդեռ, գրեթե ամեն տեղ ռուսախոսություն էր տիրում: Մի հիմնարկից մի ուրիշ հիմնարկ գրություններ էին հղում ռուսերեն: Ակադեմիայում խիստ կարգ էր իշխում՝ գրությունները, նախագահության և բաժանմունքի նիստերը, ակադեմիայի ներսում հաղորդակցությունները միայն ու միայն հայերեն էին: Նրա հայասիրությունը գործնական էր:

Ղարաբաղյան շարժման օրերին տեղի ունեցավ աշխարհացունց երկրաշարժը: Մոտ տասն օր հետո բաժանմունքում տեղեկացրին, որ տեղի է ունենալու հանդիպում ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովի, ԽՄԿԿ Կենտկոմի նախագահության անդամ Սլյունկովի, Միության ակադեմիայի պրեզիդենտ Գ.Մարչուկի, փոխպրեզիդենտ Վելիխովի, Ադրբեջանի ու Վրաստանի ակադեմիաների պրեզիդենտների հետ: Պետք է քննարկվեր հարևան

հանրապետությունների, առաջին հերթին, Ադրբեջանի հետ «բարեկամության» հարցը: Ըստ որում, Համբարձումյանն իր հերթին, այդ կեղծ «բարեկամությունը» խաղալու համար հրավիրվում էր Ադրբեջան: Բաժանմունքում ըմբոստացանք: Գտանք, որ այդ հեղինակավոր նիստում պետք է խոսել ոչ թե կեղծ «բարեկամության», այլ երկրաշարժի հետևանքների վերացման ուղիներ փնտրելու մասին:

Բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Գագիկ Սարգսյանը, մեր վրդովմունքը մեղմելու համար գնաց Համբարձումյանի մոտ: Վերադառնալով հայտնեց, որ ինքը՝ Համբարձումյանը ևս այդ կարծիքին է և հակառակ դեպքում ժողով չի հրավիրի: Գ. Սարգսյանի մտահոգմամբ կազմվեց հանձնաժողով՝ ժողովում Համբարձումյանի ելույթի տեքստը նախապատրաստելու համար: Հաջորդ օրը այն Գ. Սարգսյանը ներկայացրեց Համբարձումյանին: Նա տեղն ու տեղը ծանոթացավ տեքստին, ապա վերադարձրեց՝ հայտնելով, թե ելույթն ինքը կնախապատրաստի: Նա երբեք ելույթ չէր ունենում ուրիշի պատրաստած տեքստով, հայտնելով, որ ինքն արդեն նախապատրաստվել է: Այս անգամ էլ ասաց, որ երկրաշարժի «տնտեսական հետևանքների վերացման» թեմայով ժողովում իր գրածը թող ներկայացնի Խոջաբեկյանը*:

Դեկտեմբերի 16-ին, երեկոյան ժամը 18-ի փոխարեն, ժողովը սկսվեց 19-ին. երկրաշարժի գոտուց Ռիժկովը հազիվ էր մեկնել:

Ակադեմիական բարձր ամբիոնից հնչեց Վ. Համբարձումյանի ձայնը, որը տոգորված էր երկրաշարժի ծանր արհավիրքի մտահոգությամբ: Համբարձումյանը խոսեց ուղիղ կես ժամ՝ վերլուծելով և ներկայացնելով ողբերգական եղելությունը:

1988 թ. սեպտեմբերի 18-ին Համբարձումյանի ծննդյան 80-ամյա տարելիցի օրն էր: Նա ամեն կերպ հրաժարվում էր արցախյան այդ ահեղ օրերին իր տարելիցը նշելուց: Քանի որ Վ. Համբարձումյանը ծնվել է Վարդենիսում, վերջինիս ղեկավարությունը որոշել էր խնդրել Համբարձումյանին տարելիցը անպայման Վարդենիսում նշել: Այդպես էլ եղավ, անցավ շատ ուրախ, բարձր մակարդակով, մասնակցում էին գիտության անվանի դեմքեր:

Դա հիշատակում եմ մի կարևոր առիթով: Շատերը գիտեին, որ ես ծնունդով Վարդենիսից եմ, իսկ Համբարձումյանն ու շատ գիտնականներ չգիտեին: Երբ Վարդենիսի շրջկոմում Համբարձումյանի օգնական Օկտյաբրինա Սերգեևնայից հետաքրքրվել են, թե Խոջաբեկյանը գալու է, թե ոչ, չէ որ նա մեր հայրենակիցն է, Օկտյաբրինան՝ Համբարձումյանի այդ նվիրյալ անձը, զարմացել է: Այդ մասին հարցրել է Համբարձումյանին: Նա էլ է զարմացել:

Վարդենիսի ճանապարհին հանդիպեցինք Համբարձումյանին, նա ձեռքով բարևեց բոլորիս: Ձեռքը մեկնեց ինձ, նկատելով.

- Է, գնում ենք հայրենիքդ:

Մեկ անգամ ես դասախոսություն ունեի տնտեսագիտության ինստիտուտում և աշխատանքի ներկայացա փոքր-ինչ ուշացած: Ժամը 15-ի կողմերն էր: Հայտնեցին, որ Վ. Համբարձումյանը ինձ է փնտրում: Զարմացա: Այդպիսի դեպք հազվադեպ է տեղի ունենում: Շտապ մեկնեցի ակադեմիայի նախագահություն: Իրոք, ինձ են փնտրում: Մի քիչ վախվորած մտա Համբարձումյանի

առանձնասենյակ: Այնտեղ էին ինքը, փոխպրեզիդենտներ Վ. Ֆանարջյանն ու Գ. Սարգսյանը: Նրանց առջև փռված էր Հայաստանի քարտեզը: Այն էլ նկատենք, որ դա 1988 թ. վերջերին էր, ղարաբաղյան շարժման օրերին:

Ներկաները ինձ ընդունեցին սովորական, ինչպես միշտ, մինչդեռ մտածում էի, թե ուշանալու համար կկշտամբեն: Վ. Համբարձումյանը դիմեց ինձ.

-Ձեզ հրավիրել ենք որպես ժողովրդագրի: Վաղը Բաքվից մեզ մոտ են ժամանելու Սախարովը՝ տիկին Ելենա Բոնների, հայտնի քաղաքագետ Ստարովոյտովայի և ուրիշների հետ: Նրանց առաքելությունն Արցախի դիմաց փոխզիջման հարցն է: Ի՞նչ է Ձեր կարծիքը:

Ես անակնկալի եկա և հազիվ տիրապետելով ինձ՝ պատասխանեցի.

-Շատ դժվար հարց է: Մենք այդպիսի տարածք գրեթե չունենք: Գոյություն ունի տարածք, որը շատ չնչին է Արցախի համեմատ:

-Այդ ո՞րն է,- նրանք լարված իմ կարծիքն են ուզում իմանալ:

-Վարդենիսի, Մարտունու, Ջերմուկի և Զանգեզուրի միջև ընկած լեռնային արոտավայրերն են, որ շատ անհրաժեշտ են ադրբեջանցիներին որպես ամառային արոտավայրեր: Այն էլ նկատենք,-շարունակեցի ես,- որ այդ և դրանց հարակից տարածքները, Արալիճքի հետ միասին, որպես ամառային արոտավայրեր, մինչև Լաչին և Քելբաջար պատկանում էին Խորհրդային Հայաստանին: 1939 թ. Հայաստանը դրանք զիջեց Ադրբեջանին, փոխարենը ձմեռները Կուր-Արաքսի ափերում մեր խոշոր եղջերավոր անասունները արածեցնելու համար: Ժամանակի ընթացքում նրանք տեր դարձան այդ տարածքներին, իսկ մենք, մեր անասունները այդպես էլ երբեք չտարանք նրանց արոտավայրերը: Այժմ Հայաստանի նախկին ա-րոտավայրերում Ադրբեջանական ԽՍՀ-ն ամառային 2-3 ամիսների ընթացքում պահում է շուրջ 1 մլն ոչխար և 100 հազ. խոշոր եղջերավոր անասուններ ու ձիեր: Այն տարածքը, որ մենք կզիջենք նրանց, ևս այդքան անասունների համար լրացուցիչ արոտավայր կլինի:

-Տարածքը փոքր է, պետք է մտածել ուրիշ տեղերի մասին,-կարծեք հա-վանություն չտալով իմ առաջարկությանը՝ վրա բերեց Համբարձումյանը:

Այդ պահին չեմ հիշում, թե ով առաջարկեց, որ այդ տարածքների հետ կարելի է փոխզիջել Մեղրին, դա արդեն քիչ չէ:

Համբարձումյանը մի պահ մտածեց և վճռական ասաց.

- Դա նշանակում է Հայաստանը խեղդամահ անել, զրկել արտասահմանյան միակ երկրի՝ Իրանի հետ ունեցած կապից: Ադրբեջանը շատ ուրախ կլինի, նույնիսկ միայն Մեղրիով էլ կբավարարվի: Չէ որ Մեղրիով կարող են միանալ Ադրբեջանը, Նախիջևանը և Թուրքիան: Դա նրանց երազանքն է: Հեյդար Ալիևը ամեն գնով ձգտում էր Մեղրիի միջով ճանապարհ բացել: Բայց նշանակում է, կրկնում եմ, որ Հայաստանը կխեղդվի. չէ որ Մեղրին Հայաստանը արտերկրների հետ կապող միակ տարածքն է: Հայաստանը արտասահմանի հետ կապող ոչ մի այլ տարածք չի ունենա:

Մի անգամ Վ. Համբարձումյանն ինձ հետ զրուցելիս հետաքրքրվում էր ժողովրդագրությամբ, մասնավորապես, Հայաստանի բնակչության, նրա վերարտադրության, ինչպես նաև հեռավոր և մերձավոր արտերկրների հայերի հարցերով: Հանդիպումներում նա պետք է անպայման անդրադառնար

Հայաստանի ժողովրդագրությանը: Իմ մանրակրկիտ պատասխանն ունկնդրելով՝ նա ժպտալով նկատեց.

-Ժամանակին ես այդպես մանրազնին տիրապետում էի աստղերի վիճակագրությանը: Դա եղել է իմ ուսումնասիրությունների կարևորագույն բնագավառներից մեկը:

Լուռ լսում էի և մնացի զարմացած, որ աստղերի վիճակագրություն էլ գոյություն ունի:

Համբարձումյանը կատակասեր, հումորով օժտված մարդ էր: Բազում դեպքերից հիշատակեմ միայն մեկը:

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում քննարկվում էր մի կարևոր գիտական հարց: Համբարձումյանը գտավ, որ անմիջապես պատասխանելը շատ դժվար է, հարկավոր է մտածել: Ակադեմիկոսներից մեկը տեղն ու տեղը ասաց.

-Ես պատասխանեմ, թող մյուսները մտածեն:

Համբարձումյանը կատակեց.

-Քանի որ դու առանց մտածելու ես պատասխանելու, խնդրեմ:

Չեմ մոռանում 1990 թ. նոյեմբերի 6-ը: Դարձյալ երեկոյան ժամին ակադեմիա այցի էր գալու Լևոն Տեր-Պետրոսյանը, որն արդեն Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ էր ընտրվել: Հանդիպմանը զեկուցեց Վ. Համբարձումյանը, ուղիղ կես ժամ, ինչպես միշտ, եթե քննարկվող հարցը գիտական բնույթ չէր կրում: Նա հիմնավորեց ակադեմիայի գոյությունը՝ ներկայացնելով անելիքները, պետական հոգածության նշանակությունը գիտության համար, պետական ֆինանսավորման համակարգի էությունը այդ գործում և այն մեծ դերը, որ ակադեմիան ունի մեր ժողովրդի ճակատագրում: Դա պատահական չէր, քանի որ կառավարական օղակներում, փողոցներում, ուր պատահի, պարսավում էին ակադեմիային, նույնիսկ քիչ չէին դեպքերը, երբ ակադեմիայի աշխատողներին համարում էին ձրիակերներ և առաջ էին քաշում ակադեմիան փակելու հարցադրումը:

Ելույթ ունեցան նրանք, ովքեր նախապես նախազգուշացվել էին՝ գովելով և վեր բարձրացնելով Լ. Տեր-Պետրոսյանին: Ելույթ ունեցողներ այլևս չկային: Համբարձումյանը դիմեց ժողովականներին էլի ելույթները շարունակելու ակնկալիքով: Հրաժարվեցին: Նա ելույթի համար դիմեց Լևոն Տեր-Պետրոսյանին:

-Ելույթ ունեցողներ չկան: Խնդրեմ, ձայնը տրամադրվում է հարգարժան Լևոն Տեր-Պետրոսյանին:

Վերջինս նստած էր Համբարձումյանի աջ կողմում: Բարձրախոսը դրված էր Համբարձումյանի դիմաց, կենտրոնական մասում: Լ. Տեր-Պետրոսյանը, վերցնելով խոսափողը, անառարկելի ձևով բացականչեց.

- Ոչ, խոսողներ կա՛ն:

Այդ պահին, առանց ելույթի համար ձայն խնդրելու, ամբիոնին էր մոտենում ակադեմիայի թղթակից անդամներից մեկը: Այն ժամանակ նա □Ղարաբաղ□ կոմիտեի անդամ էր, կառավարող այր և նվիրված ու ջերմ լևոնական, որը հետագայում գժտվեց Լ. Տեր-Պետրոսյանի հետ և ճիշտ դիրք բռնեց: Մոտենալով ամբիոնին՝ նա մեղադրանքի տարափ տեղաց ակադեմիայի հասցեին, ընդհուպ մինչև այն վերացնելու սպառնալիքը: Ժողովը թեժացավ: Եղավ մի սուր

ելույթ, ելույթներ՝ իշխանությունը զավթելու, Գերագույն խորհուրդը իրենց մարդկանցով համալրելու և իրենց կամքը անվերապահորեն թելադրելու և այլ մեղադրանքներ: Նշվեց, որ շատ ինքնակամ են, այդ թվում՝ Լ. Տեր-Պետրոսյանը: Դա նրան դուր չեկավ: Ելույթ ունեցան ևս վեց մարդ: Լևոն Տեր-Պետրոսյանն այլայլված էր, ինչ-որ տեղ խառնված, շփոթված, քանի որ չէր սպասում ճշմարիտ խոսքի, այն էլ ում՝ □թագավորի□ հասցեին: Վերջապես, նա ելույթ ունեցավ: Խոսքը դիպուկ չէր, երերուն էր, խոսում էր հենց այնպես: Մարդ մտածում է, եթե առողջ քննադատություն է, ի՞նչ կա որ: Չէ որ նա իրեն դրսևորել է որպես հրապարակախոս: Այդ ի՞նչ պատահեց: Նա սովոր է, որ իրեն լուռ լսեն ու գովեն:

Համբարձումյանը մնաց աներեր: Ժողովից հետո նա հաճախ էր պարսավում հաճոյացողներին և գոհունակությամբ արտահայտվում առանց վարանելու ճշմարտությունը ներկայացնողների մասին, թեև իր շրջապատից ոմանք հակառակն էին ուզում համոզել: Միևնույն է, նա մնաց ժողովրդի և ակադեմիայի անձնուրաց պաշտպանը:

Բայց երևույթները ճնշող էին, ակադեմիայի նկատմամբ իշխանություններն ունեին սխալ դիրքորոշում, և դրանից հետո Համբարձումյանը հաճախ էր դիմում՝ աշխատանքից ազատվելու համար: Ակադեմիկոսների ճնշող մեծամասնությունը դեմ էր Համբարձումյանի ազատվելուն, ոմանք էլ, չմոռանանք, իշխանամետ էին և իրենցն էին թելադրում:

Ցրտի, սովի, էլեկտրական և տնտեսական ճգնաժամի, բնակչության սկիզբ առած արտագաղթի օրերն էին: Սենյակում, սառնամանիքին, Համբարձումյանը հաստ կաշվե բաճկոնը հագին, վզնոցը կապած, պտտվում էր իր աթոռի շուրջը, որ չմրսի և շարադրում էր ակադեմիայի կարգավիճակի վերաբերյալ տեքստը: Այն ակադեմիայի ընդհանուր ժողովում ընդունվեց, հետո ուղարկվեց Լ. Տեր- Պետրոսյանին: Բայց այդ գրությունը մնաց անպատասխան և ավելի քան մեկ տարի ընկած էր նրա զզրոցներում: Ակադեմիայի կարգավիճակի մասին պատասխանը ստացվեց Համբարձումյանի ազատվելուց հետո: Ահա թե ինչու էր Համբարձումյանը հաճախ խոսում իր ազատվելու մասին: Մի քանի հոգով մտանք Համբարձումյանի առանձնասենյակը և հորդորեցինք, որ աշխատանքից ազատվելու մասին այլևս չխոսի, այլապես ակադեմիան ցրիվ կտան: Ուղղակի ասացինք.

- Դուք նման եք այն հրամանատարին, որ պատերազմի թեժ պահին լքում է ռազմաճակատը:

- Այո, - պատասխանեց նա, - բռունցքով խփելով սեղանին, - ձեռքի մեկ հարվածով ակադեմիան ցրիվ կտան:

Ակադեմիկոսներից մեկը, ցրտից դողալով, վրա բերեց.

- Այսպես չի լինի, երկիրը կործանվում է, ակադեմիան ևս պատասխանատու է, նա իր դեմքը պետք է ցույց տա.

- Այո,- պատասխանեց նա,- մենք պետք է մեր դեմքը ցույց տանք, մեր ճշմարիտ խոսքը պետք է ասենք, այլապես ժողովուրդը արդեն ճշմարիտ մեղադրանքներ կբարդի մեր հասցեին:

Իր թելադրանքով կազմվեց հանձնաժողով՝ երկրի իրավիճակը ուսումնասիրելու, գնահատելու և ելքի ուղիներ որոնելու, կացությունը փրկելու համար:

Հանձնաժողովը, լայն ընդգրկումով, աշխատանքից հետո, երկու թե երեք նիստ գումարեց: Կազմվեց վեց էջանոց որոշման նախագիծ: Նախագծում իրատեսորեն ներկայացված էր ճշմարտությունը: Առաջարկվում էր իրավիճակը հաղթահարելու ելք: Նախագիծը ներկայացվեց Համբարձումյանին և նրա արժեքավոր դիտողություններից հետո վերջնական տեսք ստացավ:

Նշանակվեց հարցը ժողովում քննարկելու օրը: Բայց ուրբաթը ավելի շուտ եկավ, քան շաբաթը: Որոշման նախագիծը ակադեմիայի իշխանամետները հասցրին Լ. Պետրոսյանին: Հարցը վճռված էր...

Համբարձումյանը ազատվելու դիմումը արդեն ստորագրել էր: Որոշվեց նրան ընտրել պատվավոր նախագահ: Բարեբախտությունը գոնե այն էր, որ Համբարձումյանին փոխարինեց Ֆադեյ Սարգսյանը, խոշոր գիտնականը, գիտության անխոնջ կազմակերպիչը, բարի և անվանի մարդն ու քաղաքացին:

ԽՈՋԱԲԵԿՅԱՆ Վ. Ե.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս